ք. Երևան 25.09.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/194

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Մասնակից՝ «Յան Վէս-Ա» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-104/20» ծածկագրով գնանշման հարցում, մետաղների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 09.09.2020թ.-ի թիվ 26/26-1/13602-2020 գրությամբ «Յան Վէս-Ա» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) 02.09.2020թ.-ի թիվ Ե/40/1606-20 գրության հիման վրա, 09.09.2020թ.-ին «Յան Վէս-Ա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 09.09.2020թ.-ին

Բողոքներ քննող անձի 09.09.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/194 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

16.09.2020թ.-ին և 25.09.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 16.09.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 25.09.2020թ.-ին:

2. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 02.09.2020թ.-ի թիվ Ե/40/1606-20 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից (այսուհետ՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ) սեփական կարիքների համար մետաղների ձեռք բերման նպատակով հրապարակվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-104/20» ծածկագրով գնման ընթացակարգը, որին ի թիվս մյուս մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Յան Վէս Սա» ՍՊԸ: Մասնակցության հայտի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Յան Վէս Սա» ՍՊԸ մասնակցության հայտի հավելված 1.1-ի թիվ 1,2,3 չափաբաժինների տեխնիկական բնութագրում առկա է «կամ համարժեք» արտահայտությունը: Գնահատող հանձնաժողովի 24.08.2020թ. թիվ 2.3 որոշմամբ նիստը կասեցվել է և «Յան Վէս Սա» ՍՊԸ-ին առաջարկվել 1 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել շտկված տարբերակ: Սահմանված ժամկետում «Յան Վէս Սա» ՍՊԸ-ից ստացված գրությամբ իրենց կողմից ընկերությունը հայտնում է, որ «Յան Վէս Սա» ՍՊԸ-ն հրաժարվում է ներկայացնել շտկումներ (դադարեցնում է մասնակցությունը) որևէ

չափաբաժնի համար: Գնահատող հանձնաժողովի առ 27.08.2020թ.-ի թիվ 2.4 որոշմամբ «Յան Վէս Սա» ՍՊԸ մասնակցության հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի (Գնումների գործընթացի կազմակերպման կարգ) 45-րդ կետի համաձայն Ձեր դիտարկմանն եմ ներկայացնում «Յան Վէս Սա» ՍՊԸ կողմից գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունների խախտումն հիմնավորող փաստաթղթերը:»:

3. <u>«Յան Վէս-Ա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 10.09.2020թ.-ի գրությամբ դիմել է «Յան Վէս-Ա» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.09.2020թ.-ի թիվ 26/26-1/13602-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

«Յան Վէս-Ա» ՍՊԸ-ն 16.06.2020թ.-ին էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ձեզ է դիմում «Յան Վէս-Ա» ՍՊԸ տնօրեն Վահագն Հախվերդյանը:

Նախապես Ձեր ներողամտությունն են հայցում սեպտեմբերի 16-ին կայանալիք նիստին չմասնակցելու համար, քանի որ բնակվում եմ ՌԴ Մոսկվա քաղաքում: Ձեր թույլտվությամբ հակիրճ կներկայացնեմ «Յան Վէս-Ա» ՍՊԸ գործունեության մասին՝ սկսած հիմնադրման օրվանից (2019թ. փետրվար):

2019թ. փետրվար ամսին ընկերությունը սկսել է իր գործունեությունը Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքում՝ բացելով շինանյութերի մեծածախ պահեստ: Հուլիս ամսից հիմնադրել է մետաղական ցանցի արտադրություն, 2020թ. հունվար ամսից Իջևան քաղաքում՝ շինանյութերի մեծածախ պահեստ: Ներկա պահին կազմակերպությունն ունի 10 աշխատող: Ընկերությունը մասնակցել է Բերդի համայնքապետարանի կողմից ԲՀ-ԳՀԱՊՁԲ-20/16 ծածկագրով և Նոյեմբերյանի համայնքապետարանի կողմից «ՀՀ ՏՄՆՀ-ԳՀԱՊՁԲ-20/08 ծածկագրով հայտարարված գնանշման հարցմանը, որոնք իրականացվում էին էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով և հաղթող է

ճանաչվել: Մեր ընկերության կողմից պայմանագրերը կատարվել են ժամանակին և բարեխղճորեն: Մինչ օրս «Յան Վէս-Ա» ՍՊԸ պետությանը հարկ է վնարել ավելի քան 21 մլն դրամ:

Մասնակցելով ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-104/20 ծածկագրով հայտարարված մետաղների ձեռքբերման հրավերին՝ ցանկանում եմ տալ հետևյալ բացատրությունը, համակարգում հրապարակված պարզաբանման տեղեկատվությունը՝ մետաղների ձեռքբերման հրավերի թիվ 1 չափաբաժնով պահանջված անկյունակի չափերի վերաբերյալ, ես հասկացել եմ այնպես, որ կարելի է մատակարարել այլ չափերի, հիմնվելով տեխնիկական բնութագրում «80x50x5, երկարությունը ոչ պակաս 6 մ, ԳՕՍՏ 8510 Ст3 ԳՕՍՏ 535, կամ համարժեքը» նշված «կամ համարժեք» պայմանի վրա, որից, ելնելով մասնակցել եմ մրցույթին: Ես ընդունում եմ իմ վրիպումը, ներողություն եմ հայցում ՀԱԷԿ-ից և խնդրում եմ Ձեզ «Յան Վէս-Ա» ՍՊԸ չդասել ոչ պատասխանատու ընկերությունների շարքին՝ հաշվի առնելով վերոգրյալը: Այդ փոքր վրիպման համար վստահ եմ, որ չեք զրկի մասնակցելու մեր ընկերությանը հետագա մրցույթներին, որտեղ մենք դեռ հնարավորություն կունենանք ներկայացնել մատչելի գնային ու որակական ապրանքների առաջարկներ և կատարել մեր պարտականությունները բարեխիղճ և որակյալ»:

4. <u>ՍՑ-LO-2020/194 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից մետաղների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-104/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով մի շարք չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Յան Վէս-Ա» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-104/20» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Մասնակիցը թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով թիվ 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների համար սահմանված տեխնիկական բնութագրերում նշել է «կամ համարժեք» բառերը:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 24.08.2020թ.-ի նիստի թիվ 2.3-րդ արձանագրության համաձայն՝ «Յան Վէս-Ա» ՍՊԸ-ի կողմից հավելված 1.1-ում թիվ 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում նշված է «կամ համարժեք» բառերը, ինչով պայմանավորված անհրաժեշտ է հստակեցնել ներկայացվող ապրանքի տեխնիկական բնութագիրը՝ բացառելով «կամ համարժեք» բառերը:

vi. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով, որոշել է առաջարկել Մասնակցին շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vii. Հանձնաժողովի քարտուղարը armeps.am համակարգի միջոցով 25.08.2020թ.-ին Մասնակցի՝ khasikyan77@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկել է ծանուցում:

viii. Մասնակիցը 26.08.2020թ.-ին Հանձնաժողովին հայտնել է, որ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-104/20» ծածկագրով հայտարարված մետաղների ձեռքբերման հրավերի թիվ 1 չափաբաժեով պահանջված 80x50x5 անկյունակը չի արտադրվում: Այն գործարաններում պատրաստվում է միայն պատվերով որի նվազագույն չափը սկսվում է 5 տոննայից, ուստի «Յան Վէս-Ա» ՍՊԸ-ն նպատակահարմար չի գտնում որևէ չափաբաժնով որևէ առաջարկ ներկայացնել:

ix. Հանձնաժողովի 27.08.2020թ.-ի նիստի թիվ 2.4-րդ արձանագրության համաձայն՝ Հանձժաժողովը, դիտարկելով «Յան Վէս-Ա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նամակը և ղեկավարվելով 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով, որոշել է Մասնակցի հայտը մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.09.2020թ.-ի թիվ 26/26-1/13602-2020 գրությամբ «Յան Վէս-Ա»

ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (21.05.2020թ.-ի թիվ 778-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և

հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Ընթացակարգի Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի

իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից մետաղների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-104/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած նաև «Յան Վէս-Ա» ՍՊԸ-ն թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով թիվ 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների համար սահմանված տեխնիկական բնութագրերում նշել է «կամ համարժեք» բառերը: Վերոնշյալով պայմանավորված 24.08.2020թ.-ի նիստի թիվ 2.3-րդ արձանագրությամբ Հանձնաժողովը արձանագրել է, որ անհրաժեշտ է հստակեցնել ներկայացվող ապրանքի տեխնիկական բնութագիրը՝ բացառելով «կամ համարժեք» բառերը, ինչով պայմանավորված որոշել է առաջարկել Մասնակցին շտկել անհամապատասխանությունները: Մասնակիցը 26.08.2020թ.-ին Հանձնաժողովին հայտնել է, որ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-104/20» ծածկագրով հայտարարված մետաղների ձեռքբերման հրավերի թիվ 1 չափաբաժեով պահանջված 80x50x5 անկյունակը չի արտադրվում: Այն գործարաններում պատրաստվում է միայն պատվերով, որի նվազագույն չափը սկսվում է 5 տոննայից, ուստի «Յան Վէս-Ա» ՍՊԸ-ն նպատակահարմար չի գտնում որևէ չափաբաժնով որևէ առաջարկ ներկայացնել: Հանձնաժողովը, 27.08.2020թ.-ի նիստի թիվ 2.4-րդ արձանագրությամբ, ղեկավարվելով 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով, որոշել է Մասնակցի հայտը մերժել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների

խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Յան Վէս-Ա» ՍՊԸ-ն թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարությամբ, հայտնել է, որ ցանկություն ունի մասնակցել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-104/20» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժիններին և Հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Յան Վէս-Ա» ՍՊԸ-ն Պատվիրատուի կողմից սահմանված ժամանակահատվածում, չշտկելով արձանագրված անհամապատասխանությունները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ

հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.09.2020թ.-ի թիվ 26/26-1/13602-2020 գրությամբ «Յան Վէս-Ա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/194 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Յան Վէս-Ա» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**